ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 09/2026/Վ/Վ
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 12 մայիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 5-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Սեմյոն Բաբայանի դիմումը (այսուհետ՝ Դիմում)՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում թույլ տալու վերաբերյալ.

ՊԱՐԶԵՑ

1. Ըստ Դիմումով ներկայացված տեղեկատվության՝

1.1 2026 թվականի ապրիլի 27-ին Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը ստորագրել է թիվ 793-Ա որոշումը, որով համայնքային բյուջեից կանխիկ դրամական օգնություն է բաշխվել քաղաքացիներին: Ըստ Դիմումի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետը հստակ արգելում է դրամական տեսքով սոցիալական օգնության տրամադրումը, իսկ գումարների բաշխումը համընկնում է նախընտրական գործընթացների հետ, ինչը մատնանշում է քաղաքական նպատակահարմարությունը:

1.2 Ըստ Դիմումի՝ «Հետք» հետաքննական հարթակի և այլ զանգվածային լրատվության միջոցների փաստերի ստուգմամբ հաստատվել է, որ գումարների բաշխումը կրել է ընտրովի բնույթ: Դիմումով նշվել է, որ Տավրոս Սափեյանի կողմից եկեղեցական ծեսերի խոչընդոտման և համայնքային կյանքին կոպիտ միջամտության փաստերը վկայում են պաշտոնատար անձի կողմից օրինականության սկզբունքի պարբերական խախտման մասին: Դիմումի համաձայն՝ տեղի է ունեցել վարչական ռեսուրսի չարաշահում, այն է՝ համայնքային միջոցները ծառայեցվել են անձնական (կուսակցական) վարկանիշի բարձրացմանը և տեղական մակարդակում բացակայում է կոռուպցիոն ռիսկերի կառավարումը:

1.3 Դիմումով նշվել է, որ Թալինի համայնքի ղեկավարի որոշումը կայացվել է շահերի բախման առերևույթ առկայությամբ՝ ընտրող-թեկնածու կապ, օգնություն ստացողների ընտրության չափանիշները մնացել են անհայտ և ոչ իրավաչափ: Դիմումի համաձայն՝ նշված դեպքն առաջացրել է «Անկախ դիտորդ» դաշինքի և քաղաքացիական հասարակության իրավական խիստ արձագանքը, սակայն, չնայած հրապարակային փաստերին, վերահսկող մարմինները դեռևս չեն կիրառել ՀԿԿ-ԿԿՀ համագործակցային գործիքակազմը:

1.4 Դիմումի համաձայն՝ ՀՀ օրենսդրությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենք) սահմանված է ԿԿՀ-ՀԿԿ փոխգործակցության մեխանիզմը, որը նախատեսում է ԿԿՀ-ի կողմից հայտնաբերված բարեվարքության խախտումների վերաբերյալ նյութերի անհապաղ փոխանցում Հակակոռուպցիոն կոմիտեին՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար: Ըստ Դիմումի՝ սույն դեպքում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի խախտումը միայն վարչական չէ, այլ նաև Քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածի (բարեգործության արգելքի խախտում) ուղղակի հիմք:

1.5 Դիմումով ներկայացվել են հետևյալ պահանջները՝

1.5.1 հարուցել բարեվարքության և վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ Տավրոս Սափեյանի նկատմամբ,

1.5.2 տալ պաշտոնական եզրակացություն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի դրույթների դիտավորյալ շրջանցման վերաբերյալ,

1.5.3 Հանձնաժողովի կողմից ձեռք բերված նյութերը 24-ժամյա ռեժիմով փոխանցել Հակակոռուպցիոն կոմիտեին՝ Քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար,

1.5.4 Հակակոռուպցիոն կոմիտեի միջոցով իրականացնել Թալինի համայնքապետարանի համապատասխան փաստաթղթերի առգրավում՝ հետագա կեղծիքները բացառելու համար,

1.5.5 պարզել, թե ինչու մինչ օրս իրավապահ մարմինները սեփական նախաձեռնությամբ (ex officio) չեն սկսել քննություն՝ հաշվի առնելով մամուլի բացահայտումները,

1.5.6 հանրությանը պարբերաբար տեղեկացնել քննության ընթացքի մասին՝ հաշվի առնելով գործի բարձր հանրային վտանգավորությունը,

1.5.7 ձեռնարկել քայլեր՝ կասեցնելու հետագա ապօրինի վճարումները համայնքային բյուջեից մինչև քննության ավարտը:

2. Դիմումով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական տվյալները և դրանց հիմքով վարույթի հարուցումը մերժելու հիմնավորումները՝

2.1 ՀՀ վարչապետի՝ 2021 թվականի օգոստոսի 17-ի թիվ 865-Ա որոշմամբ Տավրոս Սափեյանը նշանակվել է Թալին համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ 2022 թվականի հոկտեմբերի 17-ից ստանձնել է Թալին համայնքի ղեկավարի պաշտոնը և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2 Թալին համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի ապրիլի 27-ի «Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 793-Ա որոշման համաձայն.

«1. Սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու նպատակով Ք. Թալին, «ՎԱՐԴԱՆՅԱՆՑ» ՍՊԸ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 220173331871000 բանկային հաշվեհամարին փոխանցել 370,000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ

դրամ, ԼԱԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՁ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 220179831692000 բանկային հաշվեհամարին փոխանցել 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ շահառուներին սնունդ ձեռք բերելու նպատակով:

1) Ազնիվ Ասատուրի Գրիգորյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2) Սյուզանա Ռուբիկի Եփրեմյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 40,000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

3) Սիրանուշ Գագիկի Գրիգորյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

4) Հեղինե Դերենիկի Զաքարյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

5) Հասմիկ Գագիկի Սահրադյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

6) Արմեն Մերուժանի Գևորգյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 40,000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

7) Սամվել Արմենակի Հաջոյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

8) Ռուստամ Սեյրանի Լևոնյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

9) Ժաննա Յուրիկի Սիմոնյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու նպատակով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ, «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ 2474600895160020 բանկային հաշվեհամարին փոխանցել 42,800 (քառասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես էլեկտրաէներգիայի սպասարկման վճար:

1) Սուսաննա Վալոդի Մանուկյանին տրամադրել սոցիալական աջակցություն 42,800 (քառասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով:

3. Սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու նպատակով Ք. Թալին, «ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ԱՁ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 220179832054000 բանկային հաշվեհամարին փոխանցել 54,160 (հիսունչորս հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ շահառուներին դեղորայք ձեռք բերելու նպատակով:

1) Արշալույս Սամվելի Առաքելյանին տրամադրել սոցիալական աջակցություն 54,160 (հիսունչորս հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով:

4. Սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու նպատակով «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 220410123925000 բանկային հաշվեհամարին փոխանցել 130,000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ շահառուներին ջրամատակարարման ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով:

1) Էդմոնդ Արսենի Խաչատրյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2) Գրիգոր Գագիկի Սահակյանին տրամադրել սոցիալական աջակցություն՝ 80,000 (ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:»:

2.3 Թալինի համայնքապետարանի պաշտոնական կայքի՝ talin.am, ուսումնասիրմամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ համայնքի ղեկավարի կողմից ընդունվել են սոցիալական աջակցություն տրամադրելու մասին այլ որոշումներ ևս, մասնավորապես՝ ևս 6 նման որոշում ընդունվել են 2026 թվականի ապրիլին (թիվ 732-Ա, թիվ 705-Ա, թիվ 676-Ա, թիվ 672-Ա, թիվ 591-Ա, թիվ 579-Ա որոշումները), 11 որոշում՝ 2026 թվականի մարտին (թիվ 564-Ա, թիվ 501-Ա, թիվ 483-Ա, թիվ 476-Ա, թիվ 466-Ա, թիվ 437-Ա, թիվ 433-Ա, թիվ 419-Ա, թիվ 413-Ա, թիվ 404-Ա, թիվ 403-Ա որոշումները), 6 որոշում՝ 2026 թվականի փետրվարին (թիվ 382-Ա, թիվ 381-Ա, թիվ 317-Ա, թիվ 316-Ա, թիվ 187-Ա, թիվ 186-Ա որոշումները), 5 որոշում՝ 2026 թվականի հունվարին (թիվ 180-Ա, թիվ 145-Ա, թիվ 128-Ա, թիվ 76-Ա, թիվ 63-Ա որոշումները), 1 որոշում՝ 2025 թվականի դեկտեմբերին (թիվ 2749-Ա որոշումը), 4 որոշում՝ 2025 թվականի նոյեմբերին (թիվ 2270-Ա, թիվ 2260-Ա, թիվ 2230-Ա, թիվ 2178-Ա որոշումները), 5 որոշում՝ 2025 թվականի

հոկտեմբերին (թիվ 2100-Ա, թիվ 2099-Ա, թիվ 2004-Ա, թիվ 1953-Ա, թիվ 1895-Ա որոշումները), 3 որոշում՝ 2025 թվականի սեպտեմբերին (թիվ 1806-Ա, թիվ 1778-Ա, թիվ 1708-Ա որոշումները), 2 որոշում՝ 2025 թվականի օգոստոսին (թիվ 1611-Ա, թիվ 1498-Ա որոշումները), 12 որոշում՝ 2025 թվականի հուլիսին (թիվ 1478-Ա, թիվ 1412-Ա, թիվ 1411-Ա, թիվ 1341-Ա, թիվ 1340-Ա, թիվ 1339-Ա, թիվ 1338-Ա, թիվ 1337-Ա, թիվ 1305-Ա, թիվ 1217-Ա, թիվ 1196-Ա, թիվ 1184-Ա որոշումները), 5 որոշում՝ 2025 թվականի հունիսին (թիվ 1146-Ա, թիվ 1107-Ա, թիվ 1070-Ա, թիվ 1042-Ա, թիվ 1039-Ա որոշումները), 4 որոշում՝ 2025 թվականի մայիսին (թիվ 1033-Ա, թիվ 993-Ա, թիվ 975-Ա, թիվ 960-Ա որոշումները), 4 որոշում՝ 2025 թվականի ապրիլին (թիվ 777-Ա, թիվ 757-Ա, թիվ 643-Ա, թիվ 602-Ա որոշումները) և այլն:

2.4 «Azatutyun.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի մայիսի 4-ի՝ «Թալինի համայնքապետը խախտել է բարեգործության արգելքը. ահազանգում են դիտորդները» վերտառությամբ հրապարակման[1] համաձայն՝ «Անկախ դիտորդ»-ն ահազանգում է, որ Թալինի ՔՊ-ական համայնքապետը նախընտրական շրջանում խախտել է բարեգործության արգելքը: Հրապարակման համաձայն՝ դիտորդները պատրաստվում են հանցագործության մասին հաղորդում ուղարկել Դատախազություն: Հրապարակմամբ նշվել է, որ ըստ «Անկախ դիտորդ»-ի անդամ Գևորգ Քոթանջյանի՝ Տ.Սափեյանը խախտել է և՛ Ընտրական օրենսգիրքը, և՛ ՏԻՄ օրենսդրությունը, որովհետև օրենսդրությունն արգելում է գումարի տեսքով օգնությունները: Հրապարակմամբ նշվել է, որ Տ.Սափեյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրացուցակի 61-րդ համարն է, հետևաբար՝ այս շրջանում իրավունք չունի նաև սոցիալական օգնություն բաժանել բնակիչներին: Ըստ Գ.Քոթանջյանի՝ Թալինի համայնքապետարանի էջում հրապարակված՝ ապրիլին 27-ի որոշման համաձայն՝ ավելի քան 626 հազար դրամ է տրամադրվել 14 տարբեր անձանց կարիքների՝ սննդի, ջրի, էլեկտրականության ծախսերի, դեղորայքի համար: Ընդ որում, օգնությունը ոչ թե ուղիղ բնակչին է փոխանցվել, այլ այդ գումարները տրվել են էլ.

---

[1] Հասանելի՝ https://www.azatutyun.am/a/asem-spasek-minchev-yntroutyouny-avartvi-ishkhanakan-hamaynkapety-ditordneri-tirakhoum/33748937.html

ցանցին, «Վեոլիա ջրին», դեղատանը, իսկ սննդի գումարը՝ անհատ ձեռներեցի, որն էլ սնունդ է գնել կարիքավորների համար: Հրապարակմամբ նշվել է, որ բնակիչներից մեկի համար համայնքապետարանը որոշել է տուն գնել և դրա համար 3 միլիոն դրամ է փոխանցել վաճառողին: Հրապարակմամբ նշվել է, որ Տ.Սափեյանը հակադարձել է մեղադրանքներին՝ նշելով. «Երկար տարիներ ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակից կար լքված մի հատ ամբուլատորիա Մաստարա գյուղում: Տվյալ քաղաքացին էդ ժամանակաշրջանից ապրել է էդ տարածքում՝ որպես իր գլխին տանիքը: Մենք էդտեղ նոր ամբուլատորիա ենք կառուցում, էդ մարդը պետք է դուրս մնա, հիմա ինչ արեցի ես. ավագանու որոշմամբ մենք էդ գյուղում 3 միլիոնանոց մի հատ հին շենք, մի հատ տուն, որ կառուցվել է մի 20-30 տարի առաջ, դեռ չենք արել փոխանցումը էդ մարդուն:»: Հրապարակմամբ նշվել է, որ ըստ Տ.Սափեյանի՝ ոչ մի բնակչի գումար չի փոխանցվել: Նա, մասնավորապես, նշել է. «Կա տարեկան հաստատված ավագանու կողմից գումար, և էդ գումարը նյութի տեսքով, դեղորայքի տեսքով, ուսման վարձի տեսքով ... Տեսեք, օրինակ, ներկա պահին ես ունեմ 200-ից ավելի ուսանողներ, որոնց կես գումարը մենք ենք փոխանցում երթուղուն: Այսինքն, ի՞նչ է նշանակում, պետք է էդ գումարը, ասենք՝ «էս մի ամիսը ընտրություն է, էդ գումարը չենք փոխանցի՞:»: Հրապարակմամբ նշվել է, որ Տավրոս Սափեյանը տարակուսում է՝ ինչո՞ւ պետք է դադարեցնի այս շրջանում աջակցությունը, եթե ամեն տարի դա արել են, այս տարին էլ բացառություն չէր: Օրինակ՝ անցած տարի գերազանցիկ աշակերտներին Դուբայ էին ճանապարհել, այս տարի էլ 8 միլիոն դրամ են հատկացրել 47 գերազանցիկ աշակերտների և նրանց ուղեկցող երեք անձանց Վրաստան ուղարկելու համար: Մյուս տարի էլ հնարավորության դեպքում Միացյալ Նահանգներ կուղարկեն:

2.5 «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը

պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

(...)»:

2.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների և մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների համար, ինչպես նաև պաշտոնեական դիրքի օգտագործումն ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:»:

2.7 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝

«Վարչական դատարանները քննում են՝

(...)

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.19 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն

իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:»:

2.8 «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

(...)»:

2.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի քննում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են նրանց՝

որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի քննում գլխավոր դատախազի տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին.»:

2.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(...):

2. Հանձնաժողովը (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա:

(...)»:

2.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(...)

3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

3) սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում դիմումը ներկայացրել է ոչ շահագրգիռ անձը.

4) նույն անձի վերաբերյալ նույն հիմքով առկա է Հանձնաժողովի եզրակացություն:

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները եռօրյա ժամկետում ուղարկվում են դիմողին:»:

2.12 Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշմամբ ընդունվել և 2024 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել համապատասխան կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք):

2.13 Կանոնագրքի 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:

2.14 Կանոնագրքի 10-րդ կետի համաձայն.

«10. Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

(...)

7) հանրային ռեսուրսներ՝ *ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական և*

տեղեկատվական, մարդկային ռեսուրսներ, աշխատաժամանակ, պետական կամ հանրային սեփականություն հանդիսացող այլ ռեսուրսներ,

(...):»:

2.15 Կանոնագրքի 11-րդ կետի համաձայն.

«11. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական պարտականությունները կատարելիս պարտավոր է գործել իրավունքի գերակայության սկզբունքին, օրենքի ոգուն և տառին համապատասխան, հարգել ու պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները, օրենքները, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, Կանոնագիրքը, իրավական այլ ակտերը և գործել դրանց համապատասխան՝ օրինակ ծառայելով իրեն ենթակա հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների համար:»:

2.16 Կանոնագրքի 14-րդ կետի համաձայն.

«14. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեություն (գործողություն կամ անգործություն) կամ դրա խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունք օրինավոր վարքագծի նկատմամբ:»:

2.17 Կանոնագրքի 62-րդ կետի համաձայն.

«62. Հանրային պաշտոն զբաղեցող անձը պարտավոր է ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար:»:

Դիմումով ներկայացվել է վարքագծի կանոնների խախտման վարույթ հարուցելու պահանջ, միաժամանակ, չեն ներկայացվել Կանոնագրքի այն դրույթները, որոնք, ըստ դիմողի, խախտվել են Տ.Սափեյանի կողմից: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ Դիմումով նշվել է, որ Տ.Սափեյանը թույլ է տվել վարչական ռեսուրսի չարաշահում՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Դիմումով ներկայացված փաստական հանգամանքները քննարկել Կանոնագրքի 62-րդ կետի համատեքստում:

Մասնավորապես, նշված կետով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետևյալ պարտականությունները՝

1) ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները,

2) չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար,

3) չներգրավել այն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամանակը կամ ռեսուրսները այդ նպատակի (այն է՝ նախընտրական քարոզարշավի) համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի փետրվարի 9-ի թիվ 15-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի՝ 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է 2026 թվականի մայիսի 8-ից: Ըստ այդմ, Կանոնագրքի 62-րդ կետով նախատեսված՝ նախընտրական քարոզչության սահմանափակումները պահպանելու պարտականությունը չի կարող կիրառելի լինել Դիմումով ներկայացված՝ Տ.Սափեյանի վարքագծի նկատմամբ, քանի որ թիվ 793-Ա որոշումը նրա կողմից ընդունվել է 2026 թվականի ապրիլի 27-ին, այսինքն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածից առաջ: Միաժամանակ, հարկ է

նկատել, որ նախընտրական քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է որպես զանցանք, որը, օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն, ենթակա է քննության Վարչական դատարանի կողմից՝ վարչական իրավախախտման արձանագրությունը կազմած իրավասու ընտրական հանձնաժողովի կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հայցադիմումի հիման վրա: Ըստ այդմ՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վարչական ռեսուրսի ենթադրյալ օգտագործման դեպքերը պետք է առաջին հերթին քննվեն որպես վարչական իրավախախտում, ինչից հետո միայն Հանձնաժողովը կարող է վարչական դատարանի հաստատած փաստերի հիման վրա գնահատել վարքագծի կանոնի խախտման առկայությունը կամ բացակայությունը:

Ինչ վերաբերում է նախընտրական քարոզարշավի համար հանրային ռեսուրսները և վարչական ռեսուրները չօգտագործելու պարտականությանը, ապա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովը գտնում է, որ համայնքային բյուջեի միջոցները՝ որպես համայնքի ղեկավարի կողմից տիրապետվող ֆինանսական միջոցներ, հանդիսանում են վարչական ռեսուրս: Միաժամանակ, Կանոնագրքի 62-րդ կետով սահմանվում է վարչական ռեսուրսները **նախընտրական քարոզարշավի համար** չօգտագործելու արգելք: Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ 2026 թվականի ապրիլի

27-ին ընդունված թիվ 793-Ա որոշումից բացի Թալին համայնքի ղեկավարն իր պաշտոնավարման ընթացքում ընդունել է բազմաթիվ նման՝ սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշումներ: Մասնավորապես, միայն 2025 թվականի ապրիլից մինչև 2026 թվականի ապրիլը Թալին համայնքի ղեկավարն ընդունել է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին 68 որոշում:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմումով և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով չեն ներկայացվել այնպիսի տվյալներ, որոնք կփաստեին, որ սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը Տ.Սափեյանի կողմից կապվել է Ազգային ժողովի հերթական ընտրությունների հետ, ավելին՝ Թալին համայնքի ղեկավարի՝ սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ 2026 թվականի հունիսի 7-ի՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունների օրվա նշանակումից ի վեր նման որոշումների թիվն առերևույթ կերպով չի աճել:

Հանձնաժողովը, ըստ այդմ, գտնում է, որ առկա չեն բավարար հանգամանքներ՝ փաստելու համար, որ սոցիալական աջակցության վերաբերյալ որոշումների ընդունմամբ Տ.Սափեյանը առերևույթ կերպով խախտել է Կանոնագրքի 62-րդ կետով նախատեսված՝ վարչական ռեսուրսները նախընտրական քարոզարշավի համար չօգտագործելու արգելքը:

Նկատի ունենալով, որ Դիմումով նաև նշվել է, որ Տ.Սափեյանը խախտել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկել Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կետերի վերաբերելիությունը քննարկվող դեպքին:

Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 4-ի թիվ 04/2025/Վ/Վ որոշմամբ Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կետերին համապատասխանության տեսանկյունից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը քննարկելու իրավասության վերաբերյալ արձանագրել է հետևյալը.

«(...) Հանձնաժողովն ընդգծում է, որ պարտականությունների պատշաճ կատարումն ինքնին վարքագծի կանոններից առանձին՝ ծառայողական

կարգապահությանն առնչվող պարտականություն է: Ընդ որում, որոշ դեպքերում վարքագծի կանոնների խախտումը կարող է դրսևորել նաև պարտականությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ, սակայն պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման բոլոր դեպքերը չեն, որ պարունակում են վարքագծի կանոնի խախտում:

(...)

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կետերը պետք է մեկնաբանվեն այնպես, որ դրանց խախտման համատեքստում դիտարկվեն երկու տեսակի վարքագծի դրսևորումներ, մասնավորապես՝ խոսքային կամ ոչ խոսքային բնույթի վերաբերմունքով իրավունքի գերակայության, ՀՀ օրենսդրության նկատմամբ հարգալիր վերաբերմունք առերևույթ չդրսևորելու դեպքերը (օրինակ՝ հրապարակային խոսքում անօրինական վարքագիծն արդարացնելը, որը կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեության նկատմամբ հանդուրժողականություն և հետևաբար՝ իրավունքի գերակայության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում), ինչպես նաև լիազորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, որը միաժամանակ հանգեցնում է վարքագծի սկզբունքների կամ Կանոնագրքով նախատեսված որևէ այլ կանոնի խախտման: Այլ խոսքերով, պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը չի հանգեցրել Կանոնագրքի որևէ այլ նորմի խախտման կամ իրավունքի գերակայության, ՀՀ Սահմանադրության, այլ օրենսդրական ակտերի նկատմամբ առերևույթ անհարգալից վերաբերմունքի դրսևորման, չի կարող դիտարկվել Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կետերի համատեքստում և առնչվում է առավելապես ծառայողական կարգապահությանը, այլ ոչ թե բարեվարքության համակարգին:»:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ լիազորությունների անցումը Կանոնագրքի համատեքստում Հանձնաժողովի կողմից կարող է քննարկվել միայն այն դեպքում, երբ այն ունի էթիկական բնույթ, այսինքն՝ հանգեցրել է վարքագծի սկզբունքների կամ Կանոնագրքի այլ կանոնների առերևույթ խախտման, իսկ

հնարավոր լիազորությունների անցման էթիկական բնույթի բացակայության դեպքում այն պետք է քննվի այլ իրավասու մարմինների կողմից՝ որպես ծառայողական կարգապահության կանոնների հնարավոր խախտում կամ, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) նախատեսված ենթադրյալ հանցանք:

Քննարկվող դեպքում, նկատի ունենալով, որ Տ.Սափեյանի գործողությունները չեն հանգեցրել վարքագծի սկզբունքների կամ Կանոնագրքով նախատեսված՝ վարքագծի որևէ այլ կանոնի առերևույթ խախտման՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրավասու չէ Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կանոններին համապատասխանության համատեքստում քննարկելու «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի դրույթներին Տ.Սափեյանի գործողությունների համապատասխանությունը:

Ինչ վերաբերում է Դիմումով ներկայացված այլ պահանջներին՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ դրանք առնչվում են ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցանքի՝ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու քննությանը, ինչը դուրս է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի մայիսի 5-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Սեմյոն Բաբայանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ